

6705

Ак-2861 О.д. 11.5 286

6792

№ 2

2-5519а

ВОПРОСЪ БЕЗЪ ОТВѢТА

ՄԻ ՀԱՐՑ ԱՌԱՆՑ
ՊԱՏԱՍԽԱՆԻ

„ԲԱՐԵ ԼՈՒՐԻ“
ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹԻՒՆ

ИНР. № 20773 ~

ԲԱԴՈՒ

Տպար. Ա. Ա. Թափայեանցի և Լ. Գ. Միրզայանցի
1908

Тип. Н. А. Тараева и Л. Д. Мирзаянцъ
Баку.

28
Մ-67

8 JUN 2013

1861
1 OCT 2009

ՄԻ ՀԱՐՑ ԱՌԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԻ:

«ՄԵՆՔ Ի՞նչպէս կը պրծնենք, եթէ անհոգ նենք այսպիսի մեծ փրկութեան համար»:
Երայեցոց բ, 3:

Դա մի հարց է առանց պատասխանի—որովհետեւ եթէ մենք անհոգ լինենք այդպիսի մեծ փրկութեան համար, այլևս պրծնել չըկայ: Դա հաստատ է և անկասկած:

Օլիվեր Կրօմվելի ժամանակ Անգլիայում մի մարդ մատնութեան յանցանքով բռնվել և մահի էր դատապարտվել: Նրա քաջարի կինը կարողացաւ մի կերպ անցնել պահապանների միջով և հասնել մինչև հզօր Կրօմվելի վրանը: Ընկաւ նրա սաքերը և դառն արտասուրքով խնդրեց, որ նա շնորհի անէ իր ամուսնին և ներէ նրա յանշանքը: Բայց Կրօմվելը մնաց անողոք: Կոպիտ սոսքերով մերժեց կնոջը. «Քո մարդի յանցանքը ափազանց մեծ է, նա անպատճառ պիտի մեռնէ: Վաղը երեկոյեան հէնց որ զանգը կը խփեն, նոյն ժամին կը տանեն նրան զլիսատման տեղը». ասաց նա և հեռացրեց խեղճ կնոջը իր մօտից:


Հետեւեալ օրն իրիկնադէմին երբ մութը արդէն սկսել էր աշխարհը պատել, մի կանացի կերպարանք ծածուկ վեր էր բարձրանում զան-

գակատան աստիճաններով, որտեղ կախված էր
այն զանգը, որը իրիկունները սովորաբար խփում
էին: Վերև հասնելով կանգ առաւ նա զանգի
մօտ, լայն բաց արաւ իր աշքերը և սկսեց նա-
յել դրան, մինչեւ որ վերջապէս սկսեց զանգակի
լեզուն շարժվել: Բայց որքան էլ նա խփում էր
ոչ մի ձայն չէր գուրս գալիս զանգակից, որով-
հետեւ կինը իր ձեռքը բռնել էր զանգակի վրա,
ձիշտ այնաեղ ուր որ լեզուն խփում էր, որպէս
զի զանգակը իր ձայնը չը հանէ: Հարւած հար-
ւածի ետևից էր հասնում, սակայն և այնպէս
ոչ մի ձայն չէր լսվում: Եւ զանգակի լեզուն
ծանր էր, այնպէս որ դա սկսեց վիրաւորել կնոջ
քնքոյշ ձեռքը և շուտով արիւնն էլ սկսեց հոսել
բացւած վերքերիցը. ցաւը զբեթէ անտանելի էր
դառնում, բայց կինը կակծալով դիմանում էր:
Ձեռքը ջարդվել ու խոցուվել էր, միաը պատու-
տել, բայց նա չէր տատանում և ձեռքը չէր
հեռացնում: Թիշ էր մնացել որ նա ուշաթափ
լինէր: «Արդեօք մինչև ե՞րբ պիտի շարունակի
ծերունի և խուլ ժամկոչը, ե՞րբ պիտի վերջ տայ
նա զանգի խփելուն», հառաչում էր խեղճ կինը:
Բայց քանի որ զանգը շարժվում էր, կինը դի-
մանում էր և ձեռքը ետ չէր բաշում: Վերջա-
պէս—վերջապէս զանգակի ծանր լեզուն դա-
դարեց շարժվելուց, և զանգակն էլ հանգարակեց:
Բայց կինը զիս կամ կատառառում էր, թէ մի գուցէ

ետ մնացած մի վերջի հարուածով իր մարդի
կեանքը դարձեալ վտանգի ենթարկվէր:

Յետոյ նա իջնում է ցած, վագում է բա-
նակի մէջ և հասնում կրօմվելի վրանը ձիշտ այն
ըոսէին, երբ նա սկսում է զայրանալ, թէ ինչու
զանգակը այսօր չէր խփում, քանի որ արդէն
ժամանակն էր զիլաւտելու մատնիչին: Եւ ահա
ներս է ընկնում կինը, մինչև իսկ պահապան-
ները չեն կարողանում արգելել նրան: «Ո՞հ,
տէր իմ, զանգը խփել է, բայց նրա իւրաքան-
չիւր հարւածը բռնել եմ ես ահա այդ ձեռքովս»:
Այդ ասելով ցոյց տվաւ նրան իր արիւնաշաղախ
ձեռքը: «Դուք ասել եիք, թէ հէնց որ երեկո-
յեան զանգի ձայնը լսեի, իմ մարդիս կեանքին
վերջ պիտի տրւի: Բայց զանգի ձայնը չի լսեց,
ձեռքովս բռնեցի նրա ձայնը»: Հզօր մարդը
ապշած ետ քաշվեց և տաեց. «Կին, ես այլևս
չեմ կարող դիմագրել քեզ: Գնա և տաս քո
մարդին թէ նա ազատ է, ազատ քո արիւնով»:

Ի՞նչու համար եմ պատմում այդ պատմու-
թիւնը: Արովիետե դա կարող է ծառայել որպէս
մի տկար օրինակ Յիսուսի մեզ համար կատա-
րած գործի: Նա գնել է մեզ ոչ թէ իր մի ձեռ-
քի արիւնով, այլ բռն իր սրտի արիւնով, որ-
պէս զի ազատէ մեզ՝ յաւիտենալիան մահին դա-
տապարտվածներիս: Առաքեալը ասում է. «Ոչ
թէ ապականացու արծաթով կամ ոսկով փրր-



39844-67

ՀԱՅՈ-ԱՐՄ. ՀՀ

կուեցաք՝ ձեր հայրենաւանդ ունայն վարմունքիցը. այլ Քրիստոսի պատուական արիւնովը, ինչպէս մի անբիծ և անարատ գառի»:

Այդպէս թանկ է նստել մեր Փրկչին մեզի փրկելը: Այդպէս թանկ գնով է ձեռ բերել Նամեղ՝ համար «այսպիսի մեծ փրկութիւնը»:

Բայց մեր փրկութեան համար ոչ միայն Տէր Յիսուսն է ստիպված եղել զոհարեցութիւն անել, այլ մեր երկնաւոր Հայրն էլ է մեծ զոհարեցութիւն արել. Նա տւել է մեզ համար իր Ամենասիրելին, իր սիրելի միածին Որդին: Նա գիտէր թէ մարդիկ ինչպէս պիտի վարվէին նորա հետ: Նա առաջուց էր տեսնում թէ ինչ նախատինք և անարդանք պիտի քաշէր Նա: Հոգով որդին լսում էր Գողգոթայի մուրճի հարւածների ձայնը, և իր Հայրական սիրտը պատովում էր, սակայն և այնպէս Նա բերաւ այդ զոհը: «Աստուած այնպէս—ոհ, հիմա փոքր ինչ հասկանում ենք այդ: գարմանալի «Այնպէսը»—այնպէս սիրեց աշխարհքը, որ իր միածին Որդին տւաւ:»

Նա առաջուց արդէն գիտէր, թէ ինչպէս պիտի վարվեն իր սիրելի Որդի Յիսուսի հետ, սակայն և այնպէս տւաւ Նրան, տւաւ անգութ մեղաւոր մարդկանց ձեռքք:

Ահա մի հայր և մի մայր. նրանք ունեն մի հասած աղջիկ: Գալիս է մի երիտասարդ և ուզում է աղջկան իր համար կին տոնել: Բայց

երիտասարդի բնութիւնը լսւ չէ: Ծնողներն էլ պարզ տեսնում են, որ իրանց աղջիկը կանբաղդանայ, նա կը տանջվի այն երիտասարդի ձեռքին և մինչեւ անգամ ծեծ ու հարւածներ կը ստանայ, — ինչ էք կարծում, միթէ նրանք կը համաձայնեն տալ իրանց աղջիկը այն երիտասարդին: Ոչ, ոչ մի ժամանակ չեն տալ նրանք իրանց համաձայնութիւնը:

Բայց մեր Հայրը որ երկնքումն է առաջուց պարզ տեսնում էր այդ ամենը և դարձեալ տրւալ իր Որդին: Տես ինչ թանկ գնով ձեռ բերվեց այսպիսի մեծ փրկութիւնը:

Թէ որ Հօրը համար գա այդպէս ծանը էր, ապա Որդու համար ինչպէս: Բայց նա այդ փրը կազործութեան ծանր բեռը առնում է իր վրա հնագանդութիւնով: Ինչ դժւար ճանապարհ էր, բեթեհէմից մինչեւ Գեթսեմանի և Գողգոթա: Նա տակաւին Գողգոթայից բաւական հեռու էր, եթե մի անգամ զանգատում էր և ասում. «Ես եկայ որ կրակ պցեմ երկրիս վրայ. և ինչ ուզում եմ, որ արդէն իսկ բորբոքւէր: Բայց մի մկրտութիւն ունիմ մկրտաւելու. և ինչպէս հոգս եմ քաշում, մինչեւ որ կատարուի»:

Եւ յետոյ տես, ինչպէս է Նա երեսի վրայ ընկել Զիթենեաց լուս պարտէզում, և կրկին ու կրկին հառաջում ու աղաղակում է. «Իմ Հայր, եթէ կարելի է, թող այս բաժակն ինձանից ան-

ցնիս: Տես ինչպէս Նրա քրտինքը արիւնի կաթիների պէս թափւում էին գետնի վրա, ինչպէս Նա ահ ու դողի մէջ էր գտնվում, ամբողջովին՝ կորած աշխարհի մեղքի բեռան տակ ընկճվում:

Եւ յետոյ լսիր խաւարի միջից Նրա ազաւզակի ձայնը, «Իմ Աստուած, իմ Աստուած, ինչու թողեցիր ինձ»: Ո՞հ, դա ինչ մեծ ցաւ էր պատճառում Հայրական սրտին: Այդպէս թանկ ձեռ բերվեց փրկութիւնը քեզ համար. այնպէս մի գնով, որպիսին աշխարհս բնաւ չէր տեսած—Աստուծոյ միածին Արդու արիւնով:

Այդպէս թանկ:

Եւ յետոյ: Այդ փրկութիւնը դուցէ արդէն շատ անդամներ է առաջարկվել քեզ: Լսել ես մի քարոզութիւն, կարդել ես Աստուծոյ խոսքը, ունեցել ես մի քրիստոնեա ընկեր, որը գցել է քո սրտին քո հոգիի փրկութիւնը: Կամ թէ ստացել ես մի հոգեսոր թերթ, մի փոքրիկ տեսրակ—թէ այս և թէ այն կերպով Աստուած մօտացել է քեզ և առաջարկել այդ մեծ փրկութիւնը:

Եթէ այդ ամենն էլ անօգուտ են անցել, Նա ուղարկել է քեզ վրա նեղութիւններ: Նա հիւանդացրել է քեզ, կարել քեզ աշխարհից և դրա զուարձութիւններից և քո հիւանդութեան լուրջ ժամերում առաջարկել է քեզ այդ փրկութիւնը: Նա խլել է քեզանից քո սիրելին, դրել

և նրան հողի մէջ, զրկվել ես երկրաւոր բաղդաւորութիւնից, մնացել ես մենակ, այդ ամենով կամենում էր Նա տալ քեզ այնպիսի մի բաղդաւորութիւն, որին մահն էլ չէ կարող խափանել՝ յաւիտեան տեսող բաղդաւորութիւն: Կամենում էր իրեն հաղորդակցութեան մէջ մացնել և երջանկացնել քեզ: Յիշողութեանդ բեր քո կեանքի այլ և այլ առաջնորդութիւնները, որոնք շատ անդամ անհասկանալի էին քեզ համար, յիշեր քանի քանիները մեռել են քո մօտաւորներից, և դու ինքդ էլ լսւ զգացել ես, որ Աստուած քեզ հետ գործ ունէր, որ Նա կամենում էր մի բան: Եւ ինչ էր կամենում Նա: Կամենում էր բաղդաւորացնել քեզ, կամենում էր առաջարկել քեզ այդպիսի մեծ փրկութիւնը:

Արդէօք ընդունել ես դու: Առաքեալլ ասում է. «Աստուած մեզ չ'դրաւ բարկութեան համար, այլ փրկութիւնը ստանալու համար»: Ստացել ես դու այդ փրկութիւնը, թէ տակաւին չես ստացել:

Գուցէ դու կարծում ես, թէ այստեղ երկրի վրայ ոչ ոք չէ կարող ունենալ այդ փրկութիւնը և վատահ լինել դրա համար, այլ դա կը յայտնի միւս աշխարհում միայն: Շատ մարդիկ են այդ կարծիքի, թէ երբ մարդ մեռնի միայն այն ժամանակ փրկութեան և երանութեան կ'արժանանայ: Դա բոլորովին սիսալ է: Երանու-

թիւնը այս տեղին էլ է վերաբերում: Խնդիրը
հեռաւոր ապագայում սպասվելիք կապուտ լեռ-
ների մասին չէ, այլ իսկապէս դա այս ժամա-
նակին և այս կեանքին է վերաբերում: Եթէ
այստեղ երկրի վրա չը հասնես այդ երանու-
թեան, մահից յետոյ այլևս երբէք չես կարող
հասնել զբան: Քանի որ Աստուած դրել է մեզ
հէնց այստեղ փրկութիւնը ստանալու համար,
որեմ մենք էլ ընդունենք փրկութիւնը:

Բայց պէտք է պարզ իմանանք, թէ ինչումն
է կայանում այդ փրկութիւնը,

Փրկութեան վերաբերող առաջի բանն է
մելիքի բոլորի ինը: Դա ոչ թէ երկակայու-
թիւն է, այլ իրականութիւն: Եւ ամեն մարդ-
կանց էլ հաւասարապէս պէտք է, որ նրանց
մեղքերը թողված լինին:

Մի քանի տարի առաջ յայտնի պրօֆէսոր
Քէօնտգենը մի զարմանալի գիտ արւա: Նա
գտաւ ճառագայթներ, որոնց օգնութեամբ լոյսը
թափանցում է այլ և այլ առարկաների միջով:
Եթէ պատերազմի մէջ մի ծերունի զինուորակա-
նի բաղուկը մտել է մի գնդակ և մնացել այն-
տեղ և իր ժամանակին թժիշկներն էլ չեն կարո-
ղացել գտնել և գուրս հանել գնդակը. այժմ
Քէօնտգենի ճառագայթների օգնութեամբ հա-
նում են ծեռքի լուսանկարը, որի վրա ճիշդ
երկում է, թէ որ տեղ է թագնված գնդակը:—

Ի՞նչ ես կարծում, եթէ շինվէր այնպէս մի գոր-
ծիք, որով կարելի լինէլ հանել մարդկանց ոլոր-
տերի լուսանկարը՝ ամեն նրանց մէջ եղածով,
արգեծք մարդիկը իրանց սրտերի այդ լուսա-
նկարները փոխադարձարար կը պարզեցին մի-
մեանց: Ես չեմ կարծում: Այդպէս մի պատկեր
մարդը չէր ցոյց տալ իր կնոջը և ոչ էլ կինը իր
մարդին: Որովհետեւ պատկերի վրա կը տեսնվէին
մեր սրտի մէջ դիզուած մեղքերը: Մենք կ'ամա-
չէինք նոյնիսկ մեր ամենամտերիմ բարեկամից,
թէ որ նա ճիշդ գիտենար մեր ինչ լինելը: Եւ
իմացիք, որ Աստուած հէնց այսպէս է ճանաչում
մեզ: Նա գիտէ ամեն ինչ, նրա համար ծածուկ
բան չկայ, նրա աչքերը թափանցում են մինչեւ
մեր սրտի խորքերն էլ: Ամեն ինչ որ արել ես՝
նա միշտ գտնվել է քեզ մօտ: Եւ ինչ որ էլ խօ-
սել ես՝ ամենը գիտէ նա: Նա գիտէ նոյնիսկ
ամեն ինչ որ մտածել ես: Նա շատ լաւ է ճա-
նաչում քեզ: Զես կարող ծածկվել նրանից: Նա
գիտէ՝ գուռով ես: Յիշում ես—այն ժամանակ
մի ինչ որ բան արիր—դու չես սիրում մտածել
այդ մասին, կարծում ես ժամանակի ընթաց-
քում խոս է բուսել նրա վրա—բայց Աստուած
զիտէ: Նա չի մոռանում ոչ մի բան:

Բայց լսիր: Հնարաւորութիւն ունես ազատ-
վելու քո անցեալի պարտքից, ազատվելու չար
խղճմանարից, որ այլ հս չը լսին մեղքերիդ

մեղաղբող ձայները։ Կայ քեզ համար մեղքերի
թողութիւն։

Մի բժիշկի կանչեցին թոքախտով հիւանդ
մի կտաւագործի մօտ։ Բժիշկը աեսաւ որ այլիս
յոյս չկայ հիւանդի համար։ Բայց բժիշկների
վատ սովորութեան հետևելով սկսեց յոյս առաջ
հիւանդին։ Հիւանդը զլուխը թափահարեց և ասեց.
«Ա. բժիշկ! նեղութիւն մի քաշէք, ես գիտեմ
որ մեռնելու եմ»։ «Հաստատ չի կարելի առել»,
պատախանեց բժիշկը։ «Սակայն և այնպէս, պ.
բժիշկ, գիտեմ որ մեռնելու եմ», ասաց հիւանդը։
«Բայց ես մեռնում եմ ուրախութեամբ և յաղ-
թութեամբ, որովհետեւ ես ունիմ մեղքերի թո-
ղութիւն»։ — Կէսօրից յետոյ բժիշկի կինը ասաց
իր մարդին, «Ի՞նչ կայ այսօր, նստել ես ձեռքդ
զբել ճակատիդ և մտքերի մէջ խորասուզիւլ
լինչ է պատահել քեզ»։ Եւ բժիշկը պատմեց իր
կնոջը հիւանդ կտաւագործի հետ ունեցած խօ-
սակցութիւնը և ասաց. «Չեմ կարողանում մո-
ռանալ կտաւագործի խօսքը, որ նո ասաց. Ես
ունիմ մեղքերի թողութիւն։ Ո՞հ թէ ես ևս
կտաւագործի ունեցած միտթարութիւնը ունե-
նայի»։

Թանկապին ընթերցող, կարող ես տեսլ
կտաւագործի պէս. Ես ունիմ մեղքերի թողու-
թիւն։ Արդեօք ունիս դու մեղքերի թողութիւն։
Տես դա է այն մեծ փրկութեան առաջի մասը։

Եւ երկրորդը՝ Աստմէնյ նես խաղաղու-
թիւնն է. Պարզ բան է. ով ունի մեղքերի թո-
ղութիւն, ունի նոյնպէս և Աստմէնյ հետ խո-
ղաղութիւն։ Որովհետեւ մեղքերն են զրկում մեղ
հանգստութիւնից և խաղաղութիւնից։ Եւ երբ
մեղքերը վերացվում են, ունենում ենք խաղա-
ղութիւն։

Յայսնի պլոֆէսոր Թօլուքը մի անգամ
ուղերութիւն արաւ գէպի հաւալիս։ Երբ նա
վերադարձաւ, հարցրին թէ, ի՞նչ բանն էր նա
ամենից շատ հաւանել իստալական ճանապարհոր-
դութիւնում, ի՞նչն էր նրա համար ամենազեղե-
ցիկը։ Նա տեսել էր շատ գեղեցիկ բաներ։ Տե-
սել էր մարմարի քարից շինած եկեղեցիներ և
փառաւոր պալատներ, զարմանալի և հետաքրքիր
քաղաքներ, հրաշալի նկարներ և քանդակուր-
ծութիւններ։ Բայց այդ ամենից մէկն էլ չը յի-
շեց նա։ Այլ ասաց. Իստալիայում ամենալաւ-
րանը այն պատախանն էր, որ տւաւ ինձ իստա-
լացի կառապանը, որի կառքով մի ամբողջ օր
աշել էի։ Խօսակցութեան մէջ հարցրի նրանից,
թէ ի՞նչն է նրա կարծիքով ամենալաւ բանը աշ-
խարհքի մէջ։ Առանց երկար մտածելու պատա-
խանն էնա։ «Աստմէնյ հետ խաղաղութիւն ու-
նենալը և խաղաղութիւնով էլ մեռնելը»։

Արդեօք իրաւացի չէր կառապանի խօսքը.
Վերջի անգամ զլուխը. դնել բարձին և վատա-

հութեամբ ասել. իմ և Աստուծոյ միջն ոչ մի
բան չկայ, —ոչ մի մեղք չի մեղաղում ինձ, —
և ունիմ կատարեալ խաղաղութիւն։ Իհարկէ
դա ամենալաւ բանն է աշխարհքի մէջ։

Եւ ոչինչ և ոչ ոք չի կարող տալ մեղ այդ
խաղաղութիւնը. միայն Յիսուս կարող է. նա է
մեր խաղաղութիւնը։ Մարդկանց կողմից վայելած
փառք և պատիւն էլ չեն կարող տալ այդ խա-
ղաղութիւնը և ոչ էլ փոխարինել դրան։ Գերմա-
նացի բանաստեղծ Գէօթէն անշուշտ մի հոչա-
կաւոր և սիրված մարդ էր։ Այսպէս մեծ մար-
դիկ շատ քիչ են պատահում։ Եւ այդ մեծ բա-
նաստեղծը, երկրի իշխանի և իր ժողովրդի սի-
րելին, տես ինչ է զրել.

«Դու որ երկնքից իջար
Վշտեր ու ցաւեր վերցնում ես,
Երբ մարդ մնում է անճար
Միթարութիւնով լցնում ես։
Ամեն ինչ է ունայնութիւն,
Ես յոզնել եմ մեծապէս,
Ով զու քաղցր խաղաղութիւն,
Ոհ թէ կուրծքիս մէջ ընակես։»

Նոյնիսկ այդ հոչակաւոր և փառաւորված
բանաստեղծն էլ խաղաղութիւն չունեցող մի
մարդ էր, ինչպէս նա ինքն էր ասում։

Բայց Յիսուսին ունեցողը ունի խաղաղու-
թիւն։ «Խաղաղութիւն եմ թողում ձեզ։ Իմ խա-

ղաղութիւնն եմ տալիս ձեզ։» Այդպէս ասաց նա
իր աշակերտներին. Եւ այդպէս այսօր էլ ասում
և անում է։

Հասկանալի ըան է որ խաղաղութիւն ունե-
ցողը նոյնպէս և բաղգաւոր է, նա խսպէս
բաղգաւոր է։

Մի անգամ Նօրվէգացի յայտնի բանաստեղծ
Բէօրնսօնը իր քաղաքի փողոցով անցնելիս հան-
դիմեց իրան բարեկամ մի ընտանիքի։ Նրանց
մէջ էր և իրանց մի աղջիկը, որը հաւատարիմ
աշակերտուհի էր Յիսուսի և դժափրտ քոյլ։
Բէօրնսօնը դիմեց այդ աղջկան և հարցրեց նրան։
«Սիրելիս, բաղգաւոր էք։» «Այո, պարոն պրօ-
ֆէսոր, ես բոլորովին բաղգաւոր եմ», պատա-
խանեց աղջիկը, և նրա աչքերը վայեցին ուրա-
խութիւնից։ Եւ յետոյ աղջիկն էլ փոխազարձա-
բար հարցրեց նրան. «Պարոն պրօֆէսոր, թոյլ
տւէք ես էլ ձեզ հարցնեմ, արդէօք դուք բաղ-
գաւոր էք։» Բաւական ժամանակ ոչ մի ձայն
չի լսվեց. Վերջապէս պրօֆէսորը պատասխա-
նեց. «Երանի թէ ես էլ կարողանայի ձեզ պէս
սրտանց այո տաել։»

Սիրելի ընթերցող, արդէօք դուք բաղգաւոր
ես ճշմարտապէս, բոլորովին բաղգաւոր ես թէ
ոչ։

Քանի տարիներ առաջ հարցրի մի կնոջ թէ
արդեօք ինքը բաղգաւոր է։ «Իհարկէ բաղգաւոր

հմ», պատասխանեց նա, «Ես ունիմ մի լաւ ամուսին, երբ սիրելի զաւակներ, մեր գործն էլ լաւ առաջ է գնում, ես բոլորովին բաղդաւոր եմ»: Յետոյ ես շարունակեցի հարցնել. «Բայց երբ մտածում էք մահի վրա, դարձեալ զգմում էք ձեզ բաղդաւոր»: «Մահի վրա պէտք չէ մտածել», պատասխանեց նա, «Ես գեռես երիտասարդ եմ և առողջ, միայն 28 տարեկան եմ, այդ հասակում ի՞նչ պէտք է մտածել մահի վրա»: «28 տարեկան, իմ կինս էլ ձիշդ 28 տարեկան էր որ մեռաւ: Եւ նա ևս միշտ բոլորովին առողջ էր եղել»: Երիտասարդ կինը պատահածեցաւ և նրա բաղդաւորութիւնն էլ վերջացաւ: Երբ նա մտածում էր, որ զուցէ մի օր ինքը պիտի թողնէ տուն, տեղ, ամուսին ու զաւակներ, ապա նրա բաղդաւորութիւնը սկսում էր խախտել:

Սիրելի բնիթերցող, թող մի անգամ էլ քեզ հարցնեմ. երբ մտածում ես, թէ մի օր պիտի թողնես աշխարհը և հեռանաս, տակաւին բաղդաւոր նոր ես զգում քեզ թէ ոչ:


Յիսուսի տւած բաղդաւորութիւնը մնայուն է և յարատես, նոյն խակ աւելի ևս այն ժամանակ, երբ մտածում ենք մեռնելու վրա: Հէնց այն ժամանակ է երեսում, թէ դա ոչ թէ խարէսկական այլ խակական բաղդաւորութիւն է, որը ոչ մի բանով էլ չի խափանվի: Ճշմարիտ քրիստոնեա-

ները բաղդաւոր են լինում նոյնպէս և մահի վրա մտածելու ժամանակ, մանաւանդ մեռնելու ժամին:

Ուրեմն կարելի է երջանիկ լինել հէնց այստեղ երկրի վրա: Եւ այդ երջանկութիւնը այնպէս հաստատ, փառաւոր և մեծ է, որ եթէ մահից յետոյ էլ երջանկութիւն չլինէր, հէնց այստեղի երջանկութիւնը վայելելու համար էլ արժէր դարձի զալլ:

Բայց կայ երջանկութիւն և այնուեղ: Որքան էլ փառաւոր լինի այստեղ երջանկութիւնը Քրիստոսում, դա միայն մի փոքրիկ սկիզբ է այն կատարեալ երջանկութեան, որ պիտի ունենանք մի ժամանակ, երբ երես առ երես տեսնենք Նրան:

Ի՞նչպէս կինի այն ժամանակ, երբ կը լունք կենաց ծառերի խշխցոցը: Ուր այլևս չկայ լաց ու արտասունք, չկայ հիւանդութիւն, չկայ ցաւ ու նեղութիւն, հոգս ու տառապանք: Այնտեղ այլևս մեզք էլ չկայ և մեղանչելու հնարաւորութիւն էլ չկայ. որովհետեւ երկնային երուսաղէմի դռներով չի կարող մտնել փորձիչը, որ գցէր մեզ վտանգի մէջ, ոչ էլ ծաղը անողը, հայնոյողը և չարախօսը, որ մեզ վիրաւորէին: Այնտեղ առաւոտը կանուխ չենք վագելու գործի համար: Այնուեղ այլևս չեն կանչիլ բժիշկներին և դադաղներ չեն մեջութիւնը բաժանմունք էլ չի լի-



նելու։ Յաւիտենական ցնծութիւնով, անսահման ուրախութիւնով ամեն ժամանակ լինելու ենք Տիրոջ հետ և ծառայելու ենք նրան ցերեկ ու գիշեր իր սուրբ տաճարի մէջ։

Այդպիսի երջանկութիւն ու փրկութիւն, թէ երկրի վրա և թէ երկնքում։ Յիսուսն է ձեռ բերել մեզ համար՝ իր արիւնով։ Այդպիսի վըրկութիւն է առաջարկում նա քեզ հէնց այսօր, հէնց հիմա—այդ րոպէին։ Եւ ինչ պէտք է տալ այդպիսի փրկութեան համար։ Ոչինչ։ Դրա համար նա տեղ է իր արիւնը Գողգոթայի խաչի վրա։ Նա ասել է. «Կատարւած է»։ Ամեն ինչ կատարւած է։ Յիսուսը արել է ամեն ինչ տմենի համար։ Միայն պէտք է որ դու կամենաս և ընդունես այդ փրկութիւնը։ Ուրիշ բան պէտք չէ, այլ միայն թէ ունենալ բաց սիրտ և բաց ձեռք։

Քանի որ այդպէս հեշտ է այդ փառաւոր փրկութիւնը ստանալը, անշուշտ պիտի կարծէինք, որ մարդիկը մեծ մեծ խումբերով պիտի դային և ընդունէին փրկութիւնը։ Բայց աւաղ, բոլորովին այդպէս չէ։

Քանի տարիներ առաջ որ տօնվում էր նորին մեծութիւն ուռւաց կայսրի թագաղբութեան հանդէսը, Մուկայի մօտ Խօգինեան դաշտերում մեծ հացկերութիւն էր պատրաստվել ժողովրդի համար։ Ամեն մէկին տըւում էր մի մեծ բաժակ՝

կայսերական զինանշանով, որով կարող էր նա ուզածի չափ ձրիաբար գարեջուր խմել, արւում էր նոյնապէս քաղցրաւենիք։ Գիտե՞ս ինչ պատահէց։ Այդ պարզեները բաժանելու տեղի մօտ կար մի խոր ու մեծ փառ, երկաթի փշոտ թեւերով շրջապատած։ Բայց ետեւից եկող հազարաւորները տեղեկութիւն չունէին այդ մասին։ Նրանք սկսեցին առաջ գնալ սխմելով իրանց առջևը լինողներին։ Այդ հոսանքը գնալով մեծանում էր, մինչև որ առաջի լինողները սխմվելով բերվեցան մինչև այդ երկաթի փշոտ թեւը, որը չիմանալով այդ ահազին ուժին պատառվեցաւ։ Մարդիկ սկսեցին թափել փոսի մէջ։ Ճընշումը միշտ շարունակում էր և միշտ նոր նոր մարդկային շարքեր թափում էին փոսի մէջ, մինչև որ փոսը լցվեց մարդիկներով։ Երկու հաշարի չափ մարդիկ ոտնակոխ եղան և սպանվեցան։ Տեսէք ինչ մեծ էր մարդկանց փափազը գարեջուր և քաղցրաւենիք ստանալու համար։ Բայց աւաղ, Յիսուսը կանգնել է և առաջարկում է փրկութիւնը, մի ձեռքի մէջ փրկութիւնը այս կեանքի համար, միւս ձեռքի մէջ փրկութիւնը այն կեանքի համար, կանգնած սպասում և սպասում է, բայց իզուր։ Երբեմն մէկը կամ միւսը ձեռք է մեկնում, որ ընդունէ նորա բարիքները և պարզեները։ Բայց մեծ բազմութիւնը անտարբեր ու անուշադիր անցնում գնում է նրա մօտից։

Եթէ դու մինչև հիմա գեռիս չես ընդունել
այդպիսի մեծ փրկութիւնը—բնչն է ետ պահել
քեզ։ Մարդկանց երկիւղը. վախեցել ես թէ ինչ
կ'ամեն մարդիկը. կամ գուցէ հոգս ես արել, թէ
ինչ կը մտածեն քո մեծերդ։

Աւելի լաւ չէր լինիլ, որ դու հարցնէիր,
թէ ինչ է կամենում քո Աստուածը։ «Աստուած
կամենում է որ ամեն մարդիկ փրկվեն և ճշմար-
տութեան գիտութեանը գան»։ Նա կամենում է,
որ դու ևս փրկվես, որ դու ևս բազգաւոր ու
երջանիկ մարդ գառնաս։ Աստուած դա է կա-
մենում։

Սիրելի ընթերցող, եթէ դու որոշել ես, որ
ընդունես այդ փրկութիւնը, որը ձրիաքար առա-
ջարկվում է քեզ, ապա մի յետածգիր։ Արդէն
բաւական ուշացըել ես։ Վերջապէս լրջութիւնով
վերաբերվիր դրան։ Յիշիր որ նոյր, այն ար-
դարութեան քարողիչը հարիւր քսան տարինել
առաջարկեց ու հրաւիրեց իր ժամանակակից-
ներին, որ նրանք ազատվեն եկող դատաստանիցը։
Բայց մարդիկը կարծես խուլ լինէին. միայն ծառ-
դըր էին անում նրան։ Նրանք չը հաւատացին
մինչև այն օրը որ ջրհեղեղը եկաւ։ Եւ ահա
երկնքի պատուհանները բացվեցին և անդունդի
աղբիւրները դուրս բղխեցին։ Երբ մարդիկը տե-
սան որ արդէն ջրերը ցամաքը ծածկում են,
նրանք սարսափեցին. յիշեցին նոյին և նրա տա-

պանը։ Հաւանական է որ նրանք ասած լինեն
միմեանց. «Եկէք զնանք նոյի մօտ և խնդրենք,
որ նա ընդունի մեզ իր տապանի մէջ, որովհետեւ
ահա տապանը խկապէս լողում է ջրերի երեսին։»
Եւ գալիս են, թակում դուռը և աղաղակում.
«Նոյ, սիրելի նոյ, բաց արա, որ մենք ևս մըտ-
նենք տապանը»։ Տես, հիմա ինչպէս էին քաղ-
ցրութեամբ խօսում նրա հետ։ Առաջուց միշտ
ասել էին «Խելագար նոյ», իսկ հիմա ասում են
«Սիրելի նոյ»։ Բայց ինչ պատասխան է տալիս
նոյը։ Նա ասում է. «Սիրելի բարեկամներ, ես
չեմ կարող օգնել ձեզ։ Աստուած ինքն է դուռը
փակել զրսից։ Այստեղ ներսից ոչ կողբէք կայ
դուան վրա, ոչ էլ ուրիշ մի բան, որ ես կարո-
ղանամ բաց անել»։ «Ուրեմն շուտով երկաթի
գործիքներ կը բերենք, որ դուռը բացենք, մենք
կամենում ենք անպատճառ ներս մտնել»։ Եւ
հաւանօրէն վագեցին իրանց տները որպէս զի
իրանց գործիքները բերէին—բայց մինչև որ կըր-
կին համեմէին տապանի մօտ, արդէն ջրերը վեր
բարձրացըին տապանը և ամենքը կործանվեցին։
Հարիւր քսան տարիներ տապանը այնտեղ կան-
դնած էր եղել, և նոյը առանց ձանձրանալու
հրաւիրել էր նրանց, բայց նրանք չէին կամե-
ցել զալ։ Իսկ հիմա—արդէն ուշ էր։

Գիրքը որ ասում է. «Այսօր է ընդունելի
ժամանակը, այսօր է փրկութեան օրը», ես ևս

խնդրում եմ քեզ, որ հէնց այսօր կարգի դնես
քո գործի Աստուծոյ հետ, այսօր մտածես, քա-
նի որ դեռ ուշ չէ, թէ ինչն է նպաստում քո
խաղաղութեանդ: Շուտ արա, ազատիր քո
անձու:

Մենք ինչպէս կը պրծնենք, եթէ անհոգ
լինենք այսպիսի մեծ փրկութեան համար: Դո
էր մեր հարցը: Եթէ անհոգ լինես այդ փրկու-
թեան համար, այլ ևս պրծնիլ չկայ: Նոյնիսկ
եթէ արշալուսի թերեն առնես և ծովի վերջ
ծայրերումը բնակվես, դարձեալ չես կարող պըր
ծնիլ նրա ձեռքիցը և ազատիլ նրա դատաւ-
տանիցը: «Եթէ մէկը ետ չը դառնայ, Աստուած
սրել է Իր սուրբը, իր աղեղը լարել և պատրաս-
տել է»: (Սաղմոս է, 12):

Ով թանկագին ընթերցող, Փրկչի արիւնի
հեղվել է քեզ համար էլ, խնդրում և աղաչու
եմ քեզ: Եկ փրկչի մօտ, Եկ, հէնց այսօր, հետե
ւիր նրա խօսքին, քանի ժամանակ կայ:

Եւ դեռ մինչև Երբ:

«Ազգային գրադարան



NL0161337



2-
A

ԳԻՆԸ 4 ԿՈՊ.

«Յարի Լուր» յրիստոնէական թերք հրասար
վում է ամիսը երկու անգամ։ Տարեկան բա-
նորդացինն է 2 րորդի։ Հասցեն, Եակ, Բայ-
ույ „Եառ Լորъ“